ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2020
02.2020
03.2020
04.2020
05.2020
06.2020
07.2020
08.2020
09.2020
10.2020
Հոկտեմբեր
11.2020
12.2020

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 27-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2020

Հ ո կ տ ե մ բ ե ր

թիվ 10 (266)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին

7 «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

9 «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին

11 «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

13 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՍԻԹԻ» ՍՊԸ-ին, ««ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՓԲԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին

13 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «Յուփեյ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության «Երևան Մոլ» մասնաճյուղը հաշվառելու մասին

13 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ «ԳՅՈՒՄՐԻ 1» մասնաճյուղի գործունեության դադարեցումը թույլատրելու վերաբերյալ

13 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը 1 փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 177Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին

14 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 176-Ն որոշումը «Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2020 թվականի երրորդ եռամսյակ)»

15 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Բանկային ավանդների ներգրավման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին[*]

Հոդված 1. «Բանկային ավանդների ներգրավման մասին» 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-124-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «առնվազն երեսնօրյա պարբերականությամբ» բառերը փոխարինել «իր կողմից կամ ավանդային պայմանագրում նշված պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ ամիսը,» բառերով.

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածով նախատեսված քաղվածքները ավանդատուին տրամադրվում են գրավոր եղանակով՝ էլեկտրոնային կապի միջոցով, բացառությամբ այն դեպքի, երբ ավանդատուն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա հրաժարվել է հաշվի քաղվածքները էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ հաշվի քաղվածքները փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Ընդ որում, ավանդատուն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխելու հաղորդակցման միջոցը ոչ ավելի, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Ավանդատուն իրավունք ունի նաև սույն հոդվածով նախատեսված քաղվածքները ստանալու բանկի տարածքում՝ առձեռն, որի դեպքում բանկը պարտավոր է նույն տեղեկատվությունը տրամադրել ավանդատուին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով: Հաշվի քաղվածքները էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու ավանդատուի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Ընդ որում, բանկն իրավունք չունի ավանդատուին պարտադրելու, այդ թվում՝ ավանդատուի համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ ավանդատուն հրաժարվի հաշվի քաղվածքները էլեկտրոնային կապի միջոցներով ստանալու իր իրավունքից:».

3) 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «փոստային» բառը փոխարինել «էլեկտրոնային» բառով.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ավանդատուն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Ընդ որում, ավանդատուն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխելու հաղորդակցման միջոցը ոչ ավելի, քան տարին մեկ

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի հոկտեմբերի 27-ին:

անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Ավանդատուն իրավունք ունի նաև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը ստանալու բանկի տարածքում՝ առձեռն, որի դեպքում բանկը պարտավոր է նույն տեղեկատվությունը տրամադրել ավանդատուին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով: Պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային, փոստային կամ կապի այլ միջոցներով կամ բանկի տարածքում առձեռն ստանալու ավանդատուի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է: Ընդ որում, բանկն իրավունք չունի ավանդատուին պարտադրելու, այդ թվում՝ ավանդատուի համար ոչ բարենպաստ իրավիճակ ստեղծելու, որ ավանդատուն հրաժարվի պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իր իրավունքից:».

3) 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Հայաստանի Հանրապետությունում արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ սույն հոդվածով և 6-րդ հոդվածով սահմանված հաղորդակցման կարգի խախտման դեպքում բանկն ազատվում է սույն օրենքով նախատեսված պատասխանատվությունից, եթե նման կարգի ապահովման անհնարինությունը կապված է արտակարգ կամ ռազմական դրության հայտարարման հետ:»:

Հոդված 3. Օրենքի 12-րդ հոդվածի տեքստը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Բանկի ծառայություններից օգտվող ավանդատուի՝ սույն օրենքով կամ դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված որևէ իրավունքի խախտման փաստը հաստատվելու դեպքում դատարանի վճռով, առևտրային արբիտրաժի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշմամբ բանկը պարտավոր է հօգուտ ավանդատուի վճարել 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝

1) բանկը ձեռնարկել է ավանդատուի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ գործողությունները և

2) փաստացի վերացրել է ավանդատուի իրավունքի խախտումը, որը հնարավոր է վերացնել, և

3) ավանդատուի իրավունքի խախտման հետևանքով ավանդատուն փաստացի չի կրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրական վնաս, իսկ այդպիսի վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է բանկը:

2. Սույն օրենքով կամ դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված իրավունքի խախտումների վերացման անհնարինության դեպքում սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված պայմանների առկայությունը բավարար է սույն հոդվածով նախատեսված բացառության կիրառման համար:

Ընդ որում, սույն հոդվածով նախատեսված՝ ավանդատուի իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ սպառողի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրը և դրանից հետո կնքված պայմանագրերի վրա, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածը և 2-րդ հոդվածի 1-3-րդ կետերն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելու դրությամբ գործող այն իրավահարաբերությունների վրա, որոնց հետ կապված՝ ավանդատուների կողմից այդ հոդվածներով նախատեսված դիմումները ներկայացվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ի՝ ռազմական դրություն հայտարարելու որոշումն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ և դրանից հետո գոյություն ունեցող հարաբերությունների վրա:

4. Սույն օրենքի 3-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կնքված այն ավանդային պայմանագրերից ծագած հարաբերությունների վրա, որոնց խախտումները չնայած տեղի են ունեցել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, սակայն ավանդատուի կողմից մինչև օրենքի ուժի մեջ մտնելը դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին իրավունքների խախտում հաստատելու վերաբերյալ պահանջ չի ներկայացվել:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան

29 հոկտեմբերի 2020 թ., Երևան, ՀՕ-470-Ն

*«Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Սպառողական կրեդիտավորման մասին» 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-122-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 3-րդ մասում «Կրեդիտավորման պայմանագիրը առնվազն ներառում է՝» բառերը փոխարինել «Կրեդիտավորողը պարտավոր է ապահովել, որ կրեդիտավորման պայմանագիրն առնվազն ներառի՝» բառերով:

Հոդված 2. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Սպառողը գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունն էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Ընդ որում, սպառողն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխելու հաղորդակցման միջոցը ոչ ավելի, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը կրեդիտավորողի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Սպառողն իրավունք ունի նաև սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունը ստանալու կրեդիտավորողի տարածքում՝ առձեռն, որի դեպքում կրեդիտավորողը պարտավոր է նույն տեղեկատվությունը տրամադրել սպառողին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով: Սույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված էլեկտրոնային, փոստային կամ կապի այլ միջոցներով և առձեռն ստանալու սպառողի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առ ոչինչ է:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Հայաստանի Հանրապետությունում արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ սույն հոդվածով սահմանված հաղորդակցման կարգի խախտման դեպքում կրեդիտավորողն ազատվում է սույն օրենքով նախատեսված պատասխանատվությունից, եթե նման կարգի ապահովման անհնարինությունը կապված է արտակարգ կամ ռազմական դրության հայտարարման հետ:»:

Հոդված 3. Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Կրեդիտավորողի ծառայություններից օգտվող սպառողի՝ սույն օրենքով կամ դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով սահմանված որևէ իրավունքի խախտման փաստը հաստատվելու դեպքում դատարանի վճռով, առևտրային ար-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի հոկտեմբերի 27-ին:

բիտրաժի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշմամբ հօգուտ սպառողի գանձվում է 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝

1) կրեդիտավորողը ձեռնարկել է սպառողի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ գործողությունները և

2) փաստացի վերացրել է սպառողի իրավունքի խախտումը, որը հնարավոր է վերացնել, և

3) սպառողի իրավունքի խախտման հետևանքով սպառողը փաստացի չի կրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրական վնաս, իսկ այդպիսի վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է կրեդիտավորողը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Սույն օրենքով կամ դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված իրավունքի խախտումների վերացման անհնարինության դեպքում սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված պայմանների առկայությունը բավարար է սույն հոդվածով նախատեսված բացառության կիրառման համար:

Ընդ որում, սույն հոդվածով նախատեսված՝ սպառողի իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ սպառողի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու դրությամբ գործող այն իրավահարաբերությունների վրա, որոնց հետ կապված՝ սպառողների կողմից այդ հոդվածով նախատեսված դիմումները ներկայացվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետը տարածվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ի՝ ռազմական դրություն հայտարարելու որոշումն ուժի մեջ մտնելու պահի դրությամբ և դրանից հետո գոյություն ունեցող հարաբերությունների վրա:

4. Սույն օրենքի 3-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կնքված այն կրեդիտավորման պայմանագրերից ծագած հարաբերությունների վրա, որոնց խախտումները չնայած տեղի են ունեցել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, սակայն սպառողի կողմից մինչև օրենքի ուժի մեջ մտնելը դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին իրավունքների խախտում հաստատելու վերաբերյալ պահանջ չի ներկայացվել:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան

29 հոկտեմբերի 2020 թ., Երևան, ՀՕ-471-Ն

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի 43-րդ հոդվածի 1.1-ին մասի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասով նախատեսված՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված գործարար վարվելակերպի կանոնների պահանջների՝ բանկի կողմից խախտման փաստը դատարանի, արբիտրաժի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից հաստատվելու դեպքում բանկը պարտավոր է ֆիզիկական անձ հաճախորդին վճարել 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝

1) բանկը ձեռնարկել է հաճախորդի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ գործողությունները և

2) փաստացի վերացրել է հաճախորդի իրավունքի խախտումը, որը հնարավոր է վերացնել, և

3) հաճախորդը իրավունքի խախտման հետևանքով փաստացի չի կրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված իրական վնաս, իսկ այդպիսի վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է բանկը:

Սույն մասով սահմանված իրավունքի խախտումների վերացման անհնարինության դեպքում սույն մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված պայմանների առկայությունը բավարար է սույն մասով նախատեսված բացառության կիրառման համար: Ընդ որում, նշված դրույթները չեն կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ ֆիզիկական անձ հաճախորդի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթներ: Սույն մասը չի տարածվում «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կարգավորվող հարաբերությունների վրա, իսկ բանկի գործունեությունը կարգավորող այլ հարաբերությունների նկատմամբ սույն մասը կիրառելի է այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ այդ հարաբերությունները կարգավորող այլ օրենքներով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի հոկտեմբերի 27-ին:

կնքված այն պայմանագրերից ծագած հարաբերությունների վրա, որոնց խախտումները չնայած տեղի են ունեցել մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, սակայն հաճախորդի կողմից մինչև օրենքի ուժի մեջ մտնելը դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին իրավունքների խախտում հաստատելու վերաբերյալ պահանջ չի ներկայացվել:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
29 հոկտեմբերի 2020 թ., Երևան, ՀՕ-473-Ն

«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին[*]

Հոդված 1. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» 2001 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-262 օրենքի 31-րդ հոդվածում 2-րդ մասի «գ» կետի և «զ» կետի երկրորդ պարբերության «10 միլիոն» բառերը փոխարինել «16 միլիոն» բառերով, իսկ «5 միլիոն» բառերը՝ «7 միլիոն» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի դեկտեմբերի 1-ից և տարածվում է նաև սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին գործող ավանդային պայմանագրերի վրա:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
29 հոկտեմբերի 2020 թ., Երևան, ՀՕ-479-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2020 թվականի հոկտեմբերի 27-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, ««ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 165Ա, 166Ա):
- ***Հաշվառվել է*** «Յուփեյ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Երևան Մոլ» մասնաճյուղը (որոշում թիվ 174Ա):
- ***Թույլատրվել է*** «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «ԳՅՈՒՄՐԻ 1» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/569Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/561Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2020 թ. հոկտեմբերի 27-ի թիվ 177Լ որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 4.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 5.75%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 2.75%:***

*Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմի չափը հաստատելու մասին (2020 թվականի երրորդ եռամսյակ)**

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 0%-ի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
27 հոկտեմբերի 2020 թ., N 176-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. հոկտեմբերի 26-ին:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլ. փոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 19
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 23
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 28
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 29
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 40
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 61
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 71
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 73
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 82
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	2020 թ. սեպտեմբեր	2020 թ. սեպտեմբերի իրական աճի փոփոխությունը 2019 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)	2020 թ. հոկտեմբեր	2020 թ. հոկտեմբերի իրական աճի փոփոխությունը 2019 թ. հոկտեմբերի նկատմամբ (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		-7.5		-8.1
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	190323.4	1.8	194788.9	-3.0
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	45311.4	0.6	46741.8	0.3
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	268659.6	-10.8	234291.8	-20.9
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	151913.6	-18.3	147497.6	-21.0
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	632.2	-1.7	620.9	3.0
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	229658[1]	2.7[2]	223254[3]	-0.9[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2020 թ.	Գնաճ	Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը	Գների փոփոխությունը շինարարությունում	Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.4	0.2[1]	0.3	1.7
Փետրվար	-0.2	-0.9	2.6	-3.2
Մարտ	0.5	-0.4	-1.7	-1.0
Ապրիլ	0.9	-1.2	0.7	-0.4
Մայիս	-0.1	-0.3	8.4	-6.9
Հունիս	-1.4	0.5	-0.9	-13.1
Հուլիս	-2.1	1.0	1.8	-11.9
Օգոստոս	-0.1	2.0	1.2	-13.9
Սեպտեմբեր	-0.2	0.9	-0.5	-3.4
Հոկտեմբեր	0.5	-0.7	0.4	0.7
2020 թ. հունվար - հոկտեմբերը 2019 թ. հունվար - հոկտեմբերի նկատմամբ	0.9	2.0	7.9	-4.4

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	2018	2019	2020
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.8	1.8	1.4
Փետրվար	-0.5	0.6	-0.2
Մարտ	0.1	0.1	0.5
Ապրիլ	-0.3	-0.1	0.9
Մայիս	-1.0	-0.4	-0.1
Հունիս	-1.6	-1.9	-1.4
Հուլիս	-1.2	-1.9	-2.1
Օգոստոս	0.6	-0.4	-0.1
Սեպտեմբեր	0.3	0.2	-0.2
Հոկտեմբեր	0.1	0.6	0.5
Նոյեմբեր	1.0	1.1	
Դեկտեմբեր	1.5	1.3	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.9	0.8	0.3
Փետրվար	3.3	1.9	-0.5
Մարտ	3.7	1.9	-0.1
Ապրիլ	2.4	2.2	0.9
Մայիս	1.6	2.8	1.2
Հունիս	0.9	2.5	1.7
Հուլիս	2.3	1.7	1.5
Օգոստոս	3.3	0.6	1.8
Սեպտեմբեր	3.5	0.5	1.4
Հոկտեմբեր	2.8	0.9	1.3
Նոյեմբեր	1.8	1.0	
Դեկտեմբեր	1.8	0.7	

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ [5]

Անվանում	*2020 թ. հոկտեմբերը 2019 թ. հոկտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
Գնաճ	**1.3**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	0.6	0.23
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	9.7	0.41
Հագուստ և կոշիկ	-2.8	-0.11
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.3	0.05
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	1.7	0.06
Առողջապահություն	2.5	0.24
Տրանսպորտ	1.1	0.09
Կապ	-0.1	0.00
Հանգիստ և մշակույթ	1.1	0.02
Կրթություն	2.0	0.06
Ռեստորաններ և հյուրանոցներ	1.7	0.02
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	4.0	0.18

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [5,6]

Ժամանակաշրջան	2018	2019	2020
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.3	-0.2	0.0
Փետրվար	0.3	0.1	0.1
Մարտ	0.2	0.1	0.0
Ապրիլ	0.2	0.0	0.5
Մայիս	-0.1	-0.1	0.0
Հունիս	-0.1	0.0	-0.1
Հուլիս	-0.2	-0.2	-0.1
Օգոստոս	0.2	0.1	0.1
Սեպտեմբեր	0.3	0.2	0.3
Հոկտեմբեր	0.5	0.1	0.3
Նոյեմբեր	0.2	0.1	
Դեկտեմբեր	0.0	0.1	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.8	1.2	0.4
Փետրվար	4.1	1.0	0.4
Մարտ	4.0	0.9	0.3
Ապրիլ	3.8	0.7	0.8
Մայիս	3.4	0.7	0.8
Հունիս	3.2	0.8	0.7
Հուլիս	3.0	0.8	0.8
Օգոստոս	2.7	0.7	0.8
Սեպտեմբեր	2.6	0.6	0.9
Հոկտեմբեր	2.5	0.2	1.2
Նոյեմբեր	1.9	0.1	
Դեկտեմբեր	3.4	1.8	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2020 թ. հոկտեմբերը 2019 թ. հոկտեմբերի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**1.2**	
Գազ՝ փոխադրամիջոցների լիցքավորման համար	2.0	0.09
Հաց ցորենի, բարձր տեսակի	1.9	0.08
Ալյուր ցորենի, բարձր տեսակի	7.2	0.07
Հնդկացորեն	29.1	0.07
Վիրահատական ծառայություններ	3.8	0.07
Սուրճ աղացած	8.7	0.04
Նրբերշիկ, սարդելկա	4.2	0.03
Պանիր կովի կաթից	2.8	0.03
Հավի բուդ՝ թարմ, պաղեցրած	-5.7	-0.04
Բուսական յուղ արևածաղկի	-5.0	-0.04
Պաղպաղակ սերուցքային	-23.1	-0.04
Փաստացի վճարվող վարձավճար բնակարան վարձակալողի կողմից լրացուցիչ բնակատեղիների համար	-3.0	-0.05
Շաքարավազ	-10.3	-0.06
Հավի միս՝ (ամբողջական հավ) թարմ, պաղեցրած	-5.8	-0.06
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած	-2.7	-0.11

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայված տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2020 թ. հունվար - սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2020 թ. հունվար - սեպտեմբերը 2019 թ. հունվար - սեպտեմբերի նկատմամբ (%)	2020 թ. հունվար - հոկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2020 թ. հունվար - հոկտեմբերը 2019 թ. հունվար - հոկտեմբերի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	1828.1	95.6	2054.1	94.6
Ներմուծում *(ՍԻՖ)*	3219.9	86.3	3634.9	75.7
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1391.8	76.4	1580.8	74.3

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2019 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	96678	29177	67501	861312	318282	543031
ԱՄՆ	27677	17213	10464	227890	251503	-23614
Ուկրաինա	1355	1484	-129	10294	12376	-2082
Ղազախստան	3213	551	2662	24567	4209	20357
Գերմանիա	4222	10657	-6435	33963	35359	-1396
Իսպանիա	917	2284	-1366	9266	15278	-6012
Ֆրանսիա	3347	1688	1659	27733	13744	13989
ԱՄԷ	1970	2900	-930	19385	18637	749
Չինաստան	238	5109	-4871	3295	47294	-43999
Թուրքիա	214	1168	-955	1825	8740	-6915
Այլ երկրներ	41563	40080	1483	363527	454134	-90608
Ընդամենը	**181394**	**112312**	**69082**	**1583058**	**1179557**	**403501**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2020 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	111498	36470	75028	671939	354837	317102
ԱՄՆ	57793	20125	37668	359436	121167	238269
Ուկրաինա	2082	1806	276	13759	12350	1409
Ղազախստան	2135	613	1522	17856	4546	13311
Գերմանիա	4780	3878	903	42100	54690	-12590
Իսպանիա	1025	1664	-639	10035	10609	-575
Ֆրանսիա	4414	3069	1345	35261	11894	23367
ԱՄԷ	1747	3441	-1693	28467	16169	12299
Չինաստան	175	4109	-3933	1888	42506	-40619
Թուրքիա	164	537	-373	2215	8644	-6429
Այլ երկրներ	25615	41722	-16106	306984	328849	-21866
Ընդամենը	**211430**	**117433**	**93997**	**1489940**	**966262**	**523678**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2019 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	46052	13898	32154	413547	153337	260210
ԱՄՆ	13183	8198	4985	109521	120691	-11170
Ուկրաինա	645	707	-61	4941	5947	-1005
Ղազախստան	1530	262	1268	11798	2023	9774
Գերմանիա	2011	5077	-3066	16325	16957	-632
Իսպանիա	437	1088	-651	4457	7340	-2883
Ֆրանսիա	1594	804	790	13330	6608	6722
ԱՄԷ	938	1382	-443	9309	8944	364
Չինաստան	113	2434	-2320	1588	22718	-21130
Թուրքիա	102	557	-455	877	4200	-3323
Այլ երկրներ	19797	19090	706	174815	217779	-42964
Ընդամենը	**86402**	**53497**	**32906**	**760509**	**566545**	**193964**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2020 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	54811	17931	36880	325922	171983	153939
ԱՄՆ	28403	9886	18517	174543	58911	115632
Ուկրաինա	1023	888	135	6674	5992	682
Ղազախստան	1050	301	750	8654	2205	6450
Գերմանիա	2350	1905	446	20424	26324	-5900
Իսպանիա	504	817	-313	4862	5149	-286
Ֆրանսիա	2169	1508	661	17095	5776	11319
ԱՄԷ	859	1691	-832	13801	7850	5951
Չինաստան	86	2021	-1935	916	20619	-19704
Թուրքիա	80	264	-184	1072	4186	-3114
Այլ երկրներ	12595	20492	-7897	148785	159496	-10711
Ընդամենը	**103932**	**57704**	**46228**	**722748**	**468491**	**254257**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2019	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	148.2	147.3	147.2	147.9	149.4	145.4	141.9	142.3	142.3	141.9	142.6	143.7
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	296.5	294.4	296.0	299.8	305.3	302.9	301.8	304.5	305.0	303.9	302.7	302.1
2020	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	144.3	146.9	149.7	154.1	154.3	149.6	146.7	145.7	147.0	147.1		
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	300.5	307.0	312.2	319.7	321.1	316.8	318.0	317.2	321.8	322.8		

[1] Հաշվարկում ընդգրկված են 12 գործընկեր երկրների փվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:

[2] Բոլոր փվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

[3] Աճը նշանակում է արժևորում:

[4] Վերանայվել են Իրանի Իսլամական Հանրապետության փվյալները, մասնավորապես՝ ազգային արժույթի փոխարժեքի մասով, սկսած 2018 թվականի հունվարից, ԻԻՀ կենտրոնական բանկի փվյալների փոխարեն օգտագործվել են արտարժույթի շուկայի փվյալները, իսկ ՍԳԻ հաշվարկներում՝ ԻԻՀ վիճակագրական ծառայության փվյալները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2019	2020									
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [3]	Հ
Համախառն միջազգային պահուստներ	**2849.7**	**2671.0**	**2658.9**	**2582.1**	**2491.0**	**2703.7**	**2648.2**	**2618.2**	**2658.6**	**2449.1**	**2315.9**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	6.2	5.1	4.1	2.7	2.7	74.4	51.0	41.0	39.7	38.1	38.2
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	2843.5	2665.9	2654.8	2579.3	2488.3	2629.2	2597.2	2577.3	2618.8	2411.1	2277.7

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2019	2020									
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [2]	Հ
Համախառն արտաքին պարտավորություններ	**615.4**	**609.9**	**607.9**	**623.2**	**617.0**	**617.7**	**598.6**	**605.1**	**613.1**	**607.5**	**603.9**
ԱՄՀ վարկ	202.6	201.9	200.4	199.4	198.5	196.9	184.0	181.9	183.0	180.4	181.2
ՀՓԻ տեղաբաշխում	121.8	121.3	120.6	120.7	120.1	120.1	121.4	123.8	124.8	123.8	124.3
Այլ վարկեր	288.4	285.5	286.2	302.6	297.7	300.1	292.4	298.6	304.0	302.2	297.7
Այլ պարտավորություններ	2.6	1.2	0.7	0.6	0.6	0.6	0.8	0.7	1.2	1.0	0.7

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*
[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ	Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական պարտատոմսեր	Կառավարության ավանդներ և հաշիվներ (ներառյալ ԾԻԳ-երի միջոցները)	
2019			
Դեկտեմբեր[1]	13189	327283	**-314094**
2020			
Հունվար	13446	407200	**-393753**
Փետրվար	13422	381390	**-367968**
Մարտ	13212	362888	**-349676**
Ապրիլ	13208	368728	**-355520**
Մայիս	13400	326665	**-313265**
Հունիս	13510	432280	**-418771**
Հուլիս	13564	434652	**-421088**
Օգոստոս	13360	405016	**-391656**
Սեպտեմբեր	13467	345795	**-332328**
Հոկտեմբեր	13024	368575	**-355550**

[1] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա [1] (մլրդ ՀՀ դրամ)	Շրջանառությունում կանխիկ դրամ (մլրդ ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլրդ ՀՀ դրամ)	M1 [2] (մլրդ ՀՀ դրամ)	Ժամկետային ավանդներ դրամով (մլրդ ՀՀ դրամ)	M2 [3] (մլրդ ՀՀ դրամ)	Կրամայնացված իսկական ավանդներ (մլրդ ՀՀ դրամ)	M2X [4] (մլրդ ՀՀ դրամ)	Փողի բազմապատիկ [5]	Դրամային բազմապատիկ [6]
2019										
Դեկտեմբեր	1322230	502304	494571	996875	906256	1903131	1182333	3085464	2.33	2.02
2020										
Հունվար	1208164	467879	454704	922583	921304	1843887	1167120	3011007	2.49	2.03
Փետրվար	1168974	457998	458471	916468	957218	1873686	1181731	3055418	2.61	2.14
Մարտ	1243785	474829	454450	929278	935722	1865001	1209998	3074999	2.47	2.09
Ապրիլ	1222095	493455	446083	939538	937821	1877359	1134335	3011694	2.46	2.05
Մայիս	1244186	503795	465688	969483	950344	1919827	1158069	3077896	2.47	2.00
Հունիս	1265882	508657	479252	987910	971455	1959365	1130231	3089596	2.44	1.98
Հուլիս	1217809	530743	504801	1035544	994086	2029629	1138534	3168163	2.60	2.15
Օգոստոս	1263098	538312	519160	1057472	1009081	2066553	1149195	3215749	2.55	2.17
Սեպտեմբեր	1272836	550156	525270	1075426	1006426	2081851	1152674	3234526	2.54	2.12
Հոկտեմբեր	1269445	581744	504584	1086328	978373	2064702	1118579	3183280	2.51	2.21

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
1400000
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
4000000
3000000
2000000
1000000
0
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
20
15
10



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
40
35
30
25
20


ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1]


մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2019					
Հունվար	1060720	447781	847363	1536230	2710364
Փետրվար	1115866	455534	859029	1558519	2741151
Մարտ	1166603	454160	853721	1568589	2750177
Ապրիլ	1263542	444605	857090	1584931	2787835
Մայիս	1172510	440001	860547	1608752	2841471
Հունիս	1160055	444815	852274	1622090	2831213
Հուլիս	1110660	449134	855749	1634661	2818913
Օգոստոս	1136550	448586	865996	1674633	2874234
Սեպտեմբեր	1116837	454936	873478	1707170	2910877
Հոկտեմբեր	1125008	458910	885355	1735508	2933560
Նոյեմբեր	1084995	462684	900208	1772794	2942958
Դեկտեմբեր	1177091	471133	938350	1855142	2986197
2020					
Հունվար	1201250	474840	920353	1844220	2990429
Փետրվար	1171482	476286	924594	1870446	3034764
Մարտ	1205396	488884	938245	1870707	3069406
Ապրիլ	1247697	508194	958430	1894231	3046447
Մայիս	1282163	513321	985241	1930767	3107903
Հունիս	1288845	509008	998941	1970914	3131127
Հուլիս	1249943	514850	1020475	2013360	3159496
Օգոստոս	1279799	528318	1053133	2063935	3217176
Սեպտեմբեր	1266171	540315	1067703	2088517	3243888
Հոկտեմբեր	1284864	571473	1076655	2063614	3191080

[1] Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով, ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի տարվա առաջին համարում: Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
1500000
1300000
1100000
900000
700000
500000
Փողի բազայի փաստացի շարքեր
Փողի բազայի հարթեցված շարքեր


Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
600000
550000
500000
450000
400000
350000
300000
250000
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի շարքեր
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի հարթեցված շարքեր


Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
2300000
2100000
1900000
1700000
1500000
1300000
1100000
900000
700000
500000
Դրամային զանգվածի փաստացի շարքեր
Դրամային զանգվածի հարթեցված շարքեր


Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
3400000
3000000
2600000
2200000
1800000
1400000
1000000
Փողի զանգվածի փաստացի շարքեր
Փողի զանգվածի հարթեցված շարքեր

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2019	2020									
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [2]	Հ
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)											
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***1071757***	***986481***	***981603***	***988175***	***898181***	***1009405***	***988627***	***977042***	***996569***	***899479***	***845056***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***250472***	***221683***	***187371***	***255609***	***323913***	***234781***	***277255***	***240767***	***266529***	***373358***	***424389***
Կառավարություն	-314094	-393753	-367968	-349676	-355520	-313265	-418771	-421088	-391656	-332328	-355550
Բանկեր	231679	275583	216304	275054	332745	349889	364113	342552	341319	390107	412291
